

ՀՀ Առողջապահության նախարար

Տիկին Անահիտ Ավանեսյանին

Շնորհակալություն

ՀՀ Առողջապահության
ՆԱԽԱՐԱՐ 9404
No
« 14 03 20 » 20 ր.

Հարգելի տիկին Ա. Ավանեսյան, այս նամակով թույլ տվեք իմ խորին շնորհակալությունը հայտնել Ձեզ և Ձեր ղեկավարած բուժկենտրոններին՝ հանձնես «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի» ղեկավարությանն և հատկապես վիրաբուժության կլինիկայի ղեկավար պրոֆեսոր Սուրեն Աղոյի Ստեփանյանին: Փորձեմ կարճ և բովանդակալից պատմել իմ առողջական խնդիրների և դրանց լուծման հաջորդական քայլերի մասին:

Ես՝ Զավեն Հակոբյանս բնակվում եմ ք. Ստեփանակերտում: 2022թ.-ի դեկտեմբերին ինձ մոտ առաջացան առողջական խնդիրներ՝ ցավեր որովայնի շրջանում, ընդհանուր թուլություն: Դիմեցի Արցախի հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ ինձ մոտ փստորոշվեց լեղապարկի սուր բորբոքում: 15/11/22թ.-ին կատարվեց լեղապարկի հեռացում: Սակայն հետվիրահատական շրջանում ընդհանուր թուլությունս հարաճում էր, նկատվում էր մաշկի դեղնություն: Արցախի ՀԲԿ-ում ստանում էի համապատասխան բուժում, որը, սակայն, դրական արյունք չէր տալիս: Ինձ խորհուրդ տվեցին դիմել Երևանի բժշկական կենտրոններից որևէ մեկը՝ հետագա հետազոտման և բուժման նպատակով: Լսել էի «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի» և հանձնես պրոֆեսոր Սուրեն Աղոյի Ստեփանյանի ղեկավարած պրոֆեսիոնալ կլինիկայի մասին և առանց երկար վարանելու որոշեցի տեղափոխվել նշված կլինիկա: Ցավոք այդ ժամանակ արդեն 14 օր փակ էր Երևանն Արցախին կապող միակ ճանապարհը: Բարեբախտաբար հայտնվեցին կարեկցող և օգնող մարդիկ և 28/12/22թ.-ին «Կարմիր խաչի» օգնությամբ և միջնորդությամբ հասա «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ»:

Պրոֆեսոր Ստեփանյանի գլխավորությամբ ինձնով սկսեցին զբաղվել վիրաբույժներ Հ.Հ. Շմավոնյանը, Ղ. Սարգսյանը և Հ. Համբարձումյանը: Նրանց կարեկցող և իմաստուն աչքերում ես տեսա իմ փրկության ուղին: Չնայած ամանօրյա տոնական օրերն էին, սակայն վերոնշված թիմը ամեն օր այցելում էր ինձ, կազմակերպում բոլոր անհրաժեշտ հետազոտություններն և կատարում համապատասխան միջամտությունները: Առողջական վիճակս դանդաղ, սակայն վստահ քայլերով բարելավվում էր: Կատարվեց ՀՇ քննություն, որով ընդհանուր լեղածորանումս հայտնաբերվեց քար, որը և դեղնությանս պատճառն էր հանդիսանում: 04/01/23թ.-ին կատարվեց էնդոսկոպիա և հեռացվեց լեղածորանի քարը: Դեղնությունս հետզհետե պակասում էր: Սակայն օրգանիզմիս թույլ և թերսնված լինելու պատճառով ինձ մոտ առաջացավ ենթաստամոքսային գեղձի սուր բորբոքում: Բայց ես չէի հանձնվում, քանի որ վստահ էի ինձ բուժող բժիշկների հմտության և կատարյալ մասնագիտական ունակությունների մեջ: Կատարվեց կրկնակի ՀՇ քննություն, որով հայտնաբերվեց որովայնիս խոռոչում բազմաթիվ թարախակույտեր: Ինձ բուժող բժիշկների կողմից որոշում կայացվեց կատարել վիրահատություն: Ես ամբողջությամբ վստահում էի ինձ բժշկող անձնակազմին, քանի որ վստահ էի, որ նրանց հմուտ և աստվածատուր ունակություններն

ի գորու են վերականգնել կորցրած առողջությունս և ինձ վերադարձնել բնականոն կյանք:
Համաձայնեցի վիրահատությանը:

Պրոֆեսոր Ս.Ա. Ստեփանյանը ինձ վիրահատեց 30/01/23թ.-ին: Վիրահատության ընթացքում նրան օգնում էին վիրաբույժներ Հ.Հ. Շմավոնյանը, Ղ. Սարգսյանը և Հ. Համբարձումյանը:

Հետվիրահատական շրջանն ընթացավ հարթ և առանց բարդությունների՝ ի շնորհիվ բժշկական անձնակազմի մեծ ջանքերի, անգնահատելի հոգատարության և մասնագիտական վեհ ունակությունների: Վիրահատության հաջորդ օրը ես արդեն կարողանում էի քայլել, իսկ երրորդ օրը արդեն գործեցին բնական ճանապարհով: Բառերով անհնար է նկարագրել այն զգացողությունները, որոնք ես ապրեցի այդ ժամանակ՝ արցունքներն ուղղակի հոսում էին իմ աչքերից և կյանքը նորից լցվեց վառ գույներով: Ես դուրս գրվեցի 07/03/23թ.-ին առողջացած և վերադարձա իմ բնականոն կյանքին:

Ամփոփելով վերը նշվածը ևս մեկ անգամ իմ շնորհակալությունն ու երախտագիտությունն եմ հայտնում << Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի>> ղեկավարությանն՝ տնօրեն Էդուարդ Բարսեղյանին, բուժ. գծով տեղակալ Արա Ղազարյանին և իհարկե վիրաբուժության կլինիկայի ղեկավար՝ պրոֆեսոր Սուրեն Աղոյի Ստեփանյանին, վիրաբույժներ Հակոբ Շմավոնյանին, Ղուկաս Սարգսյանին և Համբարձում Համբարձումյանին, անեսթեզիոլոգ Աիստ Ղազարյանին, անեսթեզիայի բուժքույր Միրարիի Միրզայանյանին, վիրահատարանի բուժքույր Ժենյա Հովհաննիսյանին, վիրահատարանի մայրապետ Էլլադա Խաչատրյանին՝ բուժանձնակազմ, որը նվիրված է իր կոչմանը և պատրաստակամ է ամենուր և ամեն պահի լինել հիվանդի կողքին:

Բժշկի ամբողջ կյանքը դաժան և անաչառ պայքար է՝ ընդեմ մահվան և հանուն կյանքի: ԵՎ այդ իսկ պատճառով խնդրում եմ Ձեզ, տալ համապատասխան արձագանք, քաջալերել նման բուժաշխատողներին և հաշվի առնել նրանց մարդկային և մասնագիտական արժանիքները:

Խորին հարգանքներով՝ Ջավեն Հակոբյան

07/03/2023թ.

Հեռ: +374-91-21-15-48



Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia